

established their colony, which was changed in the second half of the 19th and first half of the 20th century. It was completed with the Armenians, who had fled from Western Armenia during the Genocide. For Armenian emigrants, it was very important to establish schools and churches as a source of their national sources. The article describes several Armenian schools' history in Romania, which worked during 19th and 20th century.

### Գրականության ցանկ

1. Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1963:
2. Մամիկոնեան Պ., Ռումինահայոց ներկայն եւ ապագայն, Կալաց, 1895:
3. Պռոշյան Պ., Երկերի ժողովածու, հ. 7, Եր., 1964:
4. Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 11 (հրապարակախոսական և գրական-քննադատական հոդվածներ), Եր., 1990:

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՑԹՆԵՐԸ

*Ղազարյան Արևիկ*  
ԵՊՀ, Հայաստան

Մանկավարժական մարդաբանության գիտաճյուղի ձևավորումը պայմանավորված է մանկավարժական և մարդաբանական գիտելիքների, օրինաչափությունների համադրման անհրաժեշտությամբ, որոնք բացահայտում են միջգիտական աղերսները: Մանկավարժական մարդաբանությունը բնութագրվում է տարբեր դիրքորոշումներով՝ 1. ինտեգրված գիտություն, 2. մեթոդաբանական հիմք, 3. կիրառական փիլիսոփայություն, 4. գիտություն, որը մարդուն դիտարկում է որպես մշակութային ֆենոմեն: Տրամաբանորեն տարբեր դիրքորոշումները կարելի է հիմնավորել նրանով, որ թվարկածներից յուրաքանչյուրը փորձում է մանկավարժական մարդաբանական հիմնա-

խնդիրները դիտարկել համապատասխան կտրվածքով, որտեղ հստակորեն սահմանվում են մանկավարժական մադաբանության (անտրոպոլոգիայի) նպատակն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, հասկացությունների համակարգը, կապն այլ գիտությունների հետ: Կարծում ենք, որ նման դասակարգումները պայմանական են, քանի որ սահմանափակում են մանկավարժական մարդաբանության բազմընդգրկուն հնարավորությունները, և առաջարկում ենք մանկավարժական մարդաբանությունը դիտարկել որպես *ինտեգրալ գիտաճյուղ*, որը համակարգում է ն՝ տարբեր գիտությունների ձեռքբերումները, ն՝ մեթոդաբանական հիմք է, ն՝ կիրառական փիլիսոփայությունն և՛ մարդուն դիտարկում է որպես մշակութային ֆենոմեն: Հարկ է նկատել, որ մանկավարժական մարդաբանության ցանկացած հիմնախնդիր պետք է համադրել սոցիալական մանկավարժության համատեքստում, քանի որ սոցիալականացման գործընթացում լիարժեք բացահայտվում է ուսումնասիրվող հիմնախնդրի իրական պատկերը՝ բնություն-մարդ-կրթություն-մշակույթ գործառական համակարգում:

Մանկավարժական մարդաբանության գերակա, առանցքային հիմնախնդիրներից մեկը կենսաբանական, սոցիալ-մշակութային ծրագրերի համադրությունն է: Այդ ծրագրերի բացահայտումը հնարավոր է, եթե համապատասխանաբար կիրառվում են մանկավարժական մարդաբանության գործառույթները: Կրթական միջավայրում երեխայի զարգացման որ փուլն էլ առանձին դիտարկենք, մեթոդաբանական հիմք ենք ընդունում, որ զարգացումը հնարավոր է բնություն-մարդ-կրթություն բազմամակարդակ համակարգում, որտեղ մարդը դիտարկվում է որպես կատարյալ, բացարձակ ֆենոմեն, աշխատում է անտրոպոցենտրիկ մոտեցումը, և դրսևորվում են կենսաբանական, սոցիալական, նշանամշակութային ծրագրերը, որոնք ապահովում են ինչպես պատմական, այնպես էլ անհատական զարգացման ընթացքը: Հիմք ընդունելով մանկավարժական մարդաբանության մեթոդաբանությունն ու սկզբունքները՝ առաջարկում

ենք տարբերակել հետևյալ հիմնական գործառույթները՝ **1. համակարգող, 2. ճանաչողական-արժեքային, 3. ախտորոշիչ, 4. իրավական և 5. կանխատեսող:**

**1. Համակարգող** գործառույթը հնարավորություն է տալիս համակարգելու և միջգիտական տրամաբանական աղերսներ ձևավորելու մանկավարժության և մարդաբանական գիտությունների ամբողջական համակարգում: Հիմք ընդունելով ամբողջական ուսումնասիրությունների սկզբունքը՝ այս գործառույթի կիրառությունը հնարավորություն է տալիս որպես մեթոդաբանական հիմք դիտարկելու մանկավարժական մարդաբանության ձեռքբերումները, որն իր հերթին նույնպես համակարգում է տարբեր գիտությունների գիտելիքները, նորարարություններն ու նորամուծությունները՝ բնություն-մարդ-կրթություն համակարգում:

Մարդու զարգացմանը, նրա կրթական, սոցիալական միջավայրին հարմարվելու, հաղորդակցական մոդելների ձևավորման, արժեքային համակարգերի վերաիմաստավորման բազմաթիվ հարցադրումներ չեն կարող պարզաբանվել և լուծումներ ստանալ՝ չկիրառելով այս գործառույթը: Կարծում ենք, որ ոչ միայն մանկավարժական մարդաբանության, այլև ցանկացած միջգիտական նոր գիտաճյուղի դեպքում այս գործառույթի կիրառությունը պարտադիր է:

**2. Ճանաչողական-արժեքային** գործառույթը հնարավորություն է տալիս քննարկելու «բնություն-մարդ» ենթահամակարգը: Այն դիտարկում ենք երկու մոտեցմամբ՝ **պատմական զարգացման (ֆիլոզենետ)** և **անհատական զարգացման (օնտոնոզենետ)**: Առաջին մոտեցման դեպքում հիմք ենք ընդունում կենսաբանական ծրագրի վերլուծության արդյունքում գենետիկական այն կողավորումը, որն ապահովել է «բանական մարդ» տեսակի սոցիալական և նշանամշակութային ծրագրերի, սոցիալականացման արդյունքում դրսևորելու համամարդկային հատկանիշներ: Բնության բարդ, դինամիկ և եզակի համակարգի մասնիկ կազմելով, ենթարկվելով բնության զարգացման

օրինաչափություններին՝ մարդը ստորակարգ պահանջմունքների բավարարումից անցել է բարձրակարգ պահանջմունքների բավարարմանը: Այս ընթացքում առավել լայն հնարավորություններ են ստեղծվում սոցիալական ծրագրերի արտահայտման ու փոփոխությունների համար, որի հիմքում նշանամշակութային ծրագիրն է, արժեքային համակարգը, արժեքների սահմանման հիերարխիան:

Երկրորդ՝ **անհատական զարգացման (օնտոգենեզ)** մոտեցմամբ ախտորոշվում է մարդու անհատական կենսաբանական, գենետիկական կողմը, որը հնարավորություն է տալիս սոցիալականացման ընթացքում դրսևորելու անհատական առանձնահատկություններ, սոցիալական ծրագրի համապատասխան դրսևորում՝ կախված տարիքային, հոգեբանական, սեռային առանձնահատկություններից: Ժամանակաշրջանին համահունչ մարդը քաղաքակրթության ներգործությամբ որքան հեռանում է բնությունից, այնքան արտահայտված էական փոփոխություններ են ախտորոշվում նրա կենսաբանական ծրագրում, ինչն էլ իր հերթին հանգեցնում է սոցիալական ծրագրերի էական փոփոխությունների, քանի որ սոցիալական ծրագրերը կարող են հարմարվել սոցիալական, կրթական միջավայրում: Սակայն միշտ չէ, որ հարմարման մեխանիզմները հանգեցնում են դրական տեղաշարժերի: Առաջացող հակասությունները, որոնք միգուցե անհրաժեշտ են մարդկության գոյը ապահովելու համար, կարծես թե փոխարացվում են ամբողջական համակարգի այլ ենթամակարդակում՝ «մարդ-կրթություն-մշակույթ»: Կրթությունն այս մակարդակում, կախված մանկավարժական մարդաբանական հիմնախնդիրների առանձնահատկություններից, կարելի է դիտարկել բազմամակարդակ ընկալմամբ.

1. կրթությունը՝ որպես սոցիալական ինստիտուտ, որը հնարավորություն է տալիս անձին ինտեգրվելու հասարակություն,
2. կրթությունը որպես վերջնարդյունք,
3. կրթությունը՝ որպես միջնորդավորված մեխանիզմ՝ սոցիալական ծրագրի արտահայտման համար,

4. կրթությունը՝ որպես երևույթ,

5. կրթությունը՝ որպես համակարգ:

Յուրաքանչյուր ընկալման դեպքում մարդ «բացարձակ» արժեքը դիտարկվում է համապատասխան համակարգում, սակայն կա մեկ ընդհանրություն, որը փաստում է Պ. Գուրևիչը. կրթությունը, մշակույթը նախ պետք է դիտարկել որպես անտրոպոլոգիական ֆենոմեն, ապա նոր՝ սոցիալական<sup>1</sup>: Քանի որ ինչպես մարդու բնությունը բաց համակարգ է, այնպես էլ կրթությունն ու մշակույթը վերջնականապես ձևավորված չեն:

**3. Ախտորոշիչ գործառույթ.** Մարդ-կրթություն-մշակույթ համակարգում անընդհատ երկուստեք փոխներգործություններ են դրսևորվում. մի կողմից մարդը ձևավորում է մշակույթ, մյուս կողմից մշակույթը ձևավորում է մարդուն: Ախտորոշող գործառույթը նախնական ընթացիկ և վերջնական փուլերում այսպիսի փոխլրացնող համակարգում կարող է ախտորոշել և բացահայտել մարդու մշտական որոնումները գոյի, կեցության, հավերժության, երջանկության: Երբ մենք ախտորոշում ենք անձի զարգացման կենսաբանական, սոցիալական ծրագրերը, առաջին հերթին կարևորում ենք սոցիալական դաստիարակությունն ու կրթությունը, որոնք մանկավարժական համակարգի հենասյուններն են, իսկ դրանց ձևավորման առանձնահատկություններն ու էությունը պայմանավորված են մշակույթով<sup>2</sup>: Մարդու նշանամշակութային ծրագրի համընդհանուր դրսևորումից բացի՝ մշակույթի բազմագործոնության ու բազմամակարդակության արդյունքում ընկալման, դրսևորման առանձնահատկությունները տարբեր են, որոնք փոփոխվում են սոցիալական ծրագրի համահունչ: Կրթական համակարգում սոցիալականացման արդյունքում կեսաբանական մարդուց սոցիալական մարդ տրամաբանական անցում է կատարվում. երկուսն էլ

<sup>1</sup> **И. А. Грешилова**, Филосовский образ мира в педагогической антропологии, М., 2013, с. 35.

<sup>2</sup> **В. А. Вишнеvский**, Педагогическая диагностика управления, Чебоксары, 2000, с. 56

արտահայտում են մարդու մարդաբանական նախադրյալները և աստիճանական անցում են ապահովում մշակութային մարդու դրսևորման համար: Այս անցման տրամաբանական զարգացման ընթացքը Ի. Գրեշիլովան առաջարկում է ախտորոշել փիլիսոփայական-անտրոպոլոգիական մոտեցմամբ<sup>3</sup>, որտեղ մարդը դիտարկվում է եռահամակարգի մեջ՝ միտք-մարմին-հոգի: Թվարկվածներից յուրաքանչյուրն ունի համապատասխան փիլիսոփայական, մարդաբանական հիմքերը: Մարդու սոցիալ-պատմական զարգացման օրինաչափությունների հիմքի վրա փոփոխվող համակարգերում ախտորոշվում են անհատական, սեռային, տարիքային, հոգեբանական առանձնահատկությունները, որոնք այնքան բազմազան են, որքան եզակի և բազմազան են մարդաբանական նախադրյալները, մշակութային հիմքերը: Ախտորոշիչ գործառույթը նպատակային և արդյունավետ է այն դեպքում, երբ մեթոդաբանական հիմք են ընդունվում մանկավարժական մարդաբանության և մանկավարժական ախտորոշման սկզբունքները: Տարբեր իրավիճակների ախտորոշման դեպքում անհրաժեշտ են բազմակողմանի ուսումնասիրություններ: Որքան խորությամբ, արտաքին և ներքին էությունը բացահայտող ընթացքով է դիտարկվում իրավիճակը, այնքան ախտորոշման նպատակը տրոհվում է ենթանպատակների, առաջադրվում են լուծումներ պահանջող խնդիրներ, որոնք ենթադրում են ախտորոշողի կողմից կոնկրետ մեթոդների կիրառում: Երևույթների միջև դրսևորվող և չդրսևորվող տրամաբանական կապերի բացահայտումը, պատճառահետևանքային վերլուծությունները հնարավորություն են տալիս առավել ճշգրտորեն ընտրելու գերակայող մեթոդը: Ախտորոշման ընթացքում մեթոդները կիրառելիս հնարավորինս պետք է բացառել պատահականությունների դրսևորումները, քանի որ դրանք փոխում են ուսումնասիրությունների ընթացքը, առաջ բերում սխալվելու

---

<sup>3</sup> Воспитание как антропологический феномен, под ред. Н. В. Микляевой, М., 2014, с. 214.

հավանականություն: Անհրաժեշտ է միևնույն փաստը, երևույթը, իրավիճակը դիտարկել մի քանի անգամ՝ կիրառելով ախտորոշման գործառույթը տարբեր մեթոդների ընտրությամբ՝ վերլուծելով փիլիսոփայական, մարդաբանական, մանկավարժահոգեբանական հիմքերը:

4. **Իրավական** գործառույթի կիրառությունը հնարավորություն է տալիս կրթամշակութային միջավայրում կանոնակարգելու և հստակեցնելու կրթող-կրթվող, դաստիարակող-դաստիարակվող գույզի իրավունքներն ու պարտականությունները՝ տարբեր իրավիճակներում հստակեցնելու նրանց լիազորությունները, վարքագծային դրսևորումները, լուծելու ծագող և գոյություն ունեցող կոնֆլիկտները: Իրավական գործառույթի կիրառության հիմքում ընկած է սովորողների կրթվածության, դաստիարակվածության միասնականության ուսումնասիրման սկզբունքը: Իրավական գործառույթի կիրառությունն արդյունավետ է, եթե համամասնության մեջ են դիտարկվում զարգացման, սոցիալականացման և մանկավարժական գործընթացները՝ կարևորելով սովորողների մարդաբանական առանձնահատկությունները: Սովորողների կրթվածության, դաստիարակվածության միասնականության ուսումնասիրման սկզբունքը հնարավորություն է տալիս դաստիարակությունը դիտարկելու որպես անտրոպոլոգիական ֆենոմեն<sup>4</sup>:

5. Մանկավարժական արդաբանության **կանխատեսող գործառույթն** ուղենիշ է ապագային, երբ ախտորոշելով դաստիարակվողների մարդաբանական առանձնահատկությունները, կանխատեսվում են սոցիալական ծրագրերի իրացման հնարավորությունները սոցիումում, կանխարգելվում հնարավոր բացթողումներն ու վրիպումները: Կանխատեսող գործառույթի կիրառության հիմքում անձի և կոլեկտիվի համատեղ ուսումնասիրության սկզբունքն է: Այն հիմք է ընդունում մանկավարժական

---

<sup>4</sup> Воспитание как антропологический феномен, под ред. Н. В. Микляевой, М., 2014, с. 21.

մարդաբանության ուսումնասիրության օբյեկտը՝ «մարդ-մարդ» հարաբերակցությունը, որը դիտարկվում է կրթական համակարգում<sup>5</sup>: Անձ-կոլեկտիվ համագործակցությունը միշտ ունի երկու կողմ՝ դրսևորումներ, որոնք անձը ցուցաբերում է կոլեկտիվում ինքնաիրացվելու համար, և մյուս կողմը, որն ուղղված է ինքն իրեն: Այն դեպքում, երբ ախտորոշող մանկավարժը անձի անհատական առանձնահատկությունները գերադրելի է դարձնում կոլեկտիվից, անձին դիտարկում է սոցիալական առանձին միջավայրում, սխալման հավանականությունը մեծանում է: Մեկ այլ ծայրահեղություն է, երբ կոլեկտիվի ներգործությունն է անձի սոցիալականացման վրա բացարձականացվում: Իրական արդյունքներ կարելի է ակնկալել այն դեպքում, երբ երկուստեք ախտորոշվեն և կանխատեսվեն անձ-կոլեկտիվ համագործակցության եզրերը: Կանխատեսող գործառույթի կիրառությունն արդունավետ է, եթե հաշվի է առնվում զարգացման ընթացքում փոփոխությունների գրանցման և պարբերաբար վերլուծության սկզբունքը: Զարգացումը հանգեցնում է քանակական և որակական փոփոխությունների՝ տարիքային, անհատական, հոգեբանական, սեռային առանձնահատկություններին համապատասխան, որոնք արտահայտվում են սոցիալականացման ընթացքում: Եթե այս սկզբունքը կանխատեսման ընթացքում չի հաշվառվում, խախտվում են մանկավարժական մարդաբանության հիմքերը, քանի որ այդ փոփոխություններով են պայմանավորված ինչպես մարդ տեսակի, այնպես էլ անհատական զարգացման գոյի էվոլյուցիան:

Այսպիսով՝ մանկավարժական մարդաբանության **համակարգող, ճանաչողական-արժեքային, ախտորոշիչ, իրավական, կանխատեսող** գործառույթների կիրառությունը հնարավորություն է տալիս կրթամշակութային միջավայրում իրացնելու մարդու կենսաբանական և սոցիալական ծրագրերը՝ մարդաբա-

---

<sup>5</sup> Б. С. Гершунский, Педагогическая прогностика, Киев, 1986, с. 41.



նական օրինաչափություններին, առանձնահատկություններին համապատասխան:

## **ФУНКЦИИ ПЕДАГОГИЧЕСКОЙ АНТРОПОЛОГИИ**

*Казарян Аревик*  
ЕГУ, Армения

### **Резюме**

В данной статье представлены функции педагогической антропологии. В ней рассматриваются комплексные, познавательно-ценностные, диагностические, юридические и прогностические функции, применение которых дает возможность в культурно-образовательной среде осуществлять биологические и социальные программы человека.

## **THE FUNCTIONS OF PEDAGOGICAL ANTHROPOLOGY**

*Arevik Ghazaryan*  
YSU, Armenia

### **Abstract**

In the article are discussed the functions of pedagogical anthropology – systematic, cognitive, diagnostic, juristically, forecasting. Analyzing each function, in the article is discussed those principles, which are the base for the effective application of certain function. There is also presented the anthropological programs.

### **Գրականության ցանկ**

1. Вишневский В. А., Педагогическая диагностика управления, Чебоксары, 2000.
2. Воспитание как антропологический феномен, под ред. Н. В. Микляевой, М., 2014.
3. Гершунский Б. С., Педагогическая прогностика, Киев, 1986.
4. Грешилова И. А., Филосовский образ мира в педагогической антропологии, М., 2013.